ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Սրտանց շնորհավորում եմ բոլորիս մեր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության անկախության 33-րդ տարեդարձի առթիվ:

Այս կարևոր տոնը յուրաքանչյուրիս համար կարևոր առիթ է ևս մեկ անգամ խորհելու, անցածն ու ներկան արժևորելու և մեր պատասխանատվության տիրույթում մեծ նվիրումով և սրտացավ աշխատանքով առաջ գնալու համար:

Այսօր առավել քան երբևէ մենք պարտավոր ենք առանձնահատուկ համախմբվածություն և միասնականություն դրսևորել ու ամուր թիկունք լինել մեր սահմանները պահող զինվորին, որպեսզի նա իր թիկունքում տեսնի օրեցօր շենացող և զարգացող պետություն:

Կրկին շնորհավորելով ՀՀ անկախության 33-րդ տարեդարձի առթիվ՝ մաղթում եմ բոլորիս ամուր կամք, խաղաղ երկինք և մեծ հավատ մեր պետականության լուսավոր ապագայի հանդեպ:

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

Կեցցե՛ հայ ժողովուրդը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ